

Պատմություն, 7 դասարան

ա. Հայոց պատմություն

1. Կատարել համապատասխանեցում: / 1բալ /

- | | |
|-----------------|---|
| ա. իշխան | 1. ֆեոդալ |
| բ. հայրենիք | 2. բարձրաստիճան պաշտոնյանների հատուկ հավաքներ |
| գ. աշխարհաժողով | 3. ժառանգաբար նախարարներին պատկանող հող |
| դ. ավատատեր | 4. հատուկ պաշտոնական ցուցակ |
| ե. գահնամակ | 5. նախարար |

2. Ավատաիրական դարաշրջանում ո՞ր դասերն առաջացան: / 0.5 բալ /

- ա. ստրուկների և ստրկատերերի
- բ. ազատների և անազատների
- գ. բանվորների և բուրժուանների
- դ. ստրուկների և ճորտերի

3. Նշել Տրդատ Մեծի գահակալման տարիները: / 0.5 բալ /

- 1. 66-88թթ.
- 2. 185-198թթ.
- 3. 216-252թթ.
- 4. 298-330թթ.

4. Ո՞ր բանտը նետվեց քրիստոնեության եռանդուն քարոզիչ Գրիգորը: / 0.5 բալ /

- 1. Անհուշ
- 2. Խոր Վիրապի
- 3. Մետեխի
- 4. Վաղարշապատի

5. Ո՞ր թվականին Հայաստանում քրիստոնեությունը ընդունվեց որպես պետական կրոն: / 0.5 բալ /

- 1. 301թ.
- 2. 303թ.
- 3. 313թ.
- 4. 325թ.

6. Նշված պնդումներից որո՞նք են ճիշտ: / 0.5 բալ /

- ա. Հայոց եկեղեցին խանգարում էր երկրի միասնության և անկախության գործին:
- բ. Հայոց եկեղեցին հողատեր ավատատեր էր, ուրեմննույնպես ըմբոստանում էր թագավորի դեմ և մրցում թագավորական իշխանության հետ:
- գ. Պետության բացակայության պայմաններում եկեղեցինիր վրա է վերցրել մշակույթի պահպանման ու զարգացման գործը:
- դ. Պետության բացակայության պայմաններում եկեղեցինչի գլխավորել հայ ազատագրական շարժումները:
- ե. Հայոց եկեղեցին ժողովրդի մեջ սերմանել է հայրենասիրություն, ազգային գիտակցություն:

1. ա,բ,դ

2. գ,դ,ե

3. բ,գ,ե

4. ա,դ,ե

7.Ո՞ր թվականին Հայաստանն առաջին անգամ բաժանվեց Հռոմի և Պարսկաստանի միջև: /0.5 բալ/

- 1.374թ.
- 2.378թ.
- 3.387թ.
- 4.389թ.

8.Ո՞ր թվականին վերացավ Արշակունիների դինաստիան Հայաստանում: / 0.5 բալ/

- 1.416թ.
- 2.420թ.
- 3.423թ.
- 4.428թ.

9. Դեպքերը դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ: / 0.5 բալ /

- ա. Հայաստանի առաջին բաժանումը
 - բ. Արշակունյաց դինաստիայի կործանումը
 - գ. Հայոց գրերի գյուտը
 - դ. Վռամշապուհ թագավորի կառավարման ավարտը
- 1) բ, դ, ա, գ, 2) բ, ա, գ, դ 3) ա, գ, դ, բ, 4) գ, բ, դ, ա,

10. Լրացնել բաց թողնվածը. / 1 բալ /

Հռոմեական պատմիչ Ամիանոսը Պապ թագավորին բնութագրում էր հետևյալ կերպ`....., իսկ հայ եկեղեցականները նրան մեղադրում էին.....:

11. Շարադրեք Արտաշատում կնքված հայ-հռոմեական պայմանագրի կետերը: / 3 բալ /

բ. Համաշխարհային պատմություն

12. Համապատասխանեցնել / 0.5 բալ /

- Ա. Բյուզանդիայի անկումը 1. 1613թ.
- Բ. Հարյուրամյա պատերազմի սկիզբը 2. 1054թ.
- Գ. Քրիստոնեական եկեղեցու երկրորդ բաժանումը 3. 1453թ.
- Դ. Ռոմանովների դինաստիայի հաստատումը Ռուսաստանում 4. 1337թ.

13. Պատմական իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ: / 0.5 բալ /

- ա. Արևմտյան Հռոմեական կայսրության անկումը
 - բ. Քրիստոնեության ընդունումը Ռուսիայում
 - գ. Հռոմեական կայսրության բաժանումը երկու մասի
 - դ. Վիկինգ Լեյֆ Էյկսոնը հասավ Հյուսիսային Ամերիկա
1. դ, գ, ա, բ 2. գ, ա, բ, դ 3. ա, գ, բ, դ 4. բ, դ, ա, գ

14. Ո՞վ է Ֆրանկական պետության հիմնադիրը / 0.5 բալ /

- Ա. Կարլոս Մարտել Բ. Պիպին Կարճահասակ Գ. Քլոդվիգ Դ. Կարլոս Մեծ

15. Համապատասխանեցնել / 0.5 բալ /

- Ա. Վիկինգ 1. Հարկավաճություն
- Բ. Պոլյուդիե 2. Արհեստակցական միություն
- Դ. Համքարություն 4. Հյուսիսային մարդ
- Ե. Հերետիկոսություն 5. Զորաջոկատ
- Զ. Դրուժինա 6. Ադանդ

16. Գտնել չորս ճիշտ փաստարկները: / 1 բալ /

- ա) Առաջին արշավանքի արդյունքում խաչակիրներն Արևելքում ստեղծեցին չորս պետություն :
- բ) Սուննիներն ընդունում են իմամի մասին գաղափարը:
- գ) Ավատատիրական քաղաքի առաջացման առաջին պայմանը արհեստի անջատումն էր գյուղատնտեսությունից :
- դ) Կարոլինգներին անվանում էին <ծուլլ թագավորներ > :
- ե) Քրիստոնեության ընդունման շնորհիվ Հին Ռուսիան մաս կազմեց եվրոպական քաղաքակրթությանը:
- զ) Միջնադարյան քաղաքների տնտեսական հիմքը արհեստներն էին :
- է) Հնդկական թվային համակարգի մեջ <0> նշանը ներմուծել են հայերը:

17. Շարադրել՝ Խաչակրաց արշավանքների նախադրյալները և հետևանքները (թվարկել պատճառները, նշել դրական և բացասական հետևանքները): / 3 բալ /

գ. Եկեղեցու պատմություն

18. Լրացնել բաց թողնվածը: / յուրաքանչյուրը 0.5 բալ /

Ա. Ինչպե՞ս է կոչվում Հայոց եկեղեցին (և ինչու՞):

Բ. Քրիստոնեությունը Հայաստանում պետական կրոն է ընդունվել _____ թ., _____ թագավորի օրոք: Հայոց առաջին կաթողիկոսն է _____:

Գ. Հայերեն առաջին թարգմանված գիրքն է _____, որն իր հիանալի թարգմանության շնորհիվ կոչվում է _____: Առաջին հայերեն նախադասությունն է՝ «Ճանաչել զհմաստութիւն և զխրատ, իմանալ զբանս հանճարոյ»: Ո՞րն է այս նախադասության աղբյուրը /հստակ նշել որտեղի՞ց է այս նախադասությունը/: _____:

19. Իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ: / 0.5 բալ /

- Ա. Մայր Տաճարի կառուցումը
 Բ. Քրիստոնեության ընդունումը Աբգար 5-րդի կողմից
 Գ. Նիկեայի առաջին Տիեզերական ժողովը
 Դ. Գրերի գյուտը

1. Դ, Գ, Ա, Բ 2. Բ, Ա, Գ, Դ 3. Ա, Դ, Գ, Բ 4. Գ, Ա, Բ, Դ

20. Շարադրել՝ Աշտիշատի ժողովը /ե՞րբ է տեղի ունեցել, ո՞վ էր կաթողիկոսը, ի՞նչ կանոններ են ընդունվել: / 3 բալ /

Մաղթում ենք հաջողություն

Անուն, ազգանուն, հայրանուն _____
 Դպրոց _____
 Դասարան _____